

**Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ  
2011-2016թթ. ուսանողական հարցման արդյունքների  
վերլուծություն**

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում վերջին տարիներին պարբերական բնույթ կրող հասարակական կարծիքի հարցումներում ղեկավարությունը, ի թիվս մյուս կարևոր հիմնախնդիրների, առանձնակի նշանակություն է տալիս ուսանողների կողմից դասախոսների, ամբիոնների ու ֆակուլտետների գործունեությանը տրվող գնահատականներին: Այն լիովին համահունչ է Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացումներին: Ազատականացվող մրցակցային տնտեսության ու կրթության պայմաններում նորովի է դրվում կրթության որակի, միջազգային կրթատարածքի ու ժամանակակից գործատուների պահանջներին համարժեք մասնագետների պատրաստման հարցը: Մի իրողություն, որն էլ ավելի է կարևորում դասախոս-ուսանող և ֆակուլտետ-ուսանող հարաբերություններում հետադարձ կապը: Այդ կապի արդյունավետության կարևոր պայմաններից մեկը հենց ուսանողների կարծիք-գնահատականների միջոցով նրանց «հավաքական ինքնագնահատությանը, տրամադրություններին ու ապրումներին» պարբերաբար անդրադարձն է, հարաբերությունների կատարելագործման ճանապարհին հնարավորինս նրանց պահանջների ու նկատառումների հաշվառումը: Հարցումների արդյունքների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքներով ընդհանրացումը նաև բուհի գործունեության արդյունավետության յուրովի գնահատականներից մեկն է:

Մայր բուհում մշակված և կանոնակարգված հարցաշարում, 5 բալանի սանդղակով /5-ը ամենաբարձր, իսկ 1-ը ամենացածր գնահատականներն են/ ուսանողությունը յուրաքանչյուր հաջորդ կիսամյակի ընթացքում գնահատում է նախորդ կիսամյակում անցած բոլոր դասընթացների դասավանդողների մասնագիտական, անձնային ու մանկավարժական որակները (հետևաբար յուրովի, որպես ընդհանրացված արդյունք՝ նաև ամբիոնի գործունեությունը): Մասնավորաբար, գնահատվել են, թե դասախոսները որքանով են նյութը մատուցում մատչելի, օժանդակում դասընթացի նյութը յուրացնելուն, որքանով է լսարանում ապահովվում շահախնդիր ուսումնական կարգապահությունը, արտալսարանային ակտիվ ու նպատակաուղղված հաղորդակցումը:

Ուղիղ հարցադրմամբ ուսանողները գնահատել են նաև ֆակուլտետի ղեկանի, ղեկանի տեղակալների ու գործավարի գործունեությունից իրենց բավարարվածությունը:

2011-15թթ. հարցման արդյունքները ՄԿՈԱ բաժնի կողմից ենթարկվել է վերլուծության և կազմվել է հաշվետվություն, որի հետ կարելի է ծանոթանալ մասնաճյուղի կայք էջում: Ներկա վերլուծությունն ընդգրկում է 2015-16 ուստարվա երկու կիսամյակների վերաբերյալ անցկացված հարցումների արդյունքները, ամբիոնների ու ֆակուլտետների մակարդակներով 2011-12-ից 2015-16 ուսումնական տարիների հետազոտություններից ստացած տվյալների ընդհանրական գնահատականները, որը թերևս կարելի է անվանել ուսանողական մեկ սերնդի կամ «հնգամյակի» գնահատական:

Քանի որ տվյալ վերլուծությունը կատարվել է հինգ տարվա կտրվածքով և յուրովի մասնաճյուղում հասարակական կարծիքի սոցիոլոգիայի «ներդրման» որակական փուլ է, ավելորդ չենք համարում մինչ որոշակի տվյալներին անդրադառնալը հիշեցնել մեթոդական և

բարոյական բնույթի որոշ ճշմարտություններ, ինչն էական է սոցիոլոգիական մշակույթի ձեռքբերման ճանապարհին:

Ի վերջո, հասարակական կարծիքի մեր հարցումները երկու գլխավոր նպատակ են հետապնդում.

1. ի շահ մասնաճյուղի գիտության մեթոդներով հասու լինել ճշմարտությանը, կապված կրթօջախի կառավարման մարդկային խնդիրների հետ,
2. այդ ճանապարհին «չեզոքացնել» սուբյեկտիվ գնահատականների բացասական ազդեցությունը սոցիալական միջավայրի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա:

Քննարկվող հարցումներին մասնակցել են ուսանողության գերակշիռ մասը: Հարցաթերթիկը չեն լրացրել միայն այն քիչ ուսանողները, ովքեր հարցումներն անցկացնելու դասաժամերին տարբեր պատճառներով բացակայել են: Այնպես որ, կարելի է տվյալ հարցումները համարել համատարած, հետևաբար ներկայացուցչության խնդիր չի դրվում:

Նշենք, որ ներկայացուցչության խնդիրը կիրառական սոցիոլոգիայում գլխավորագույններից է: Այդ պատճառով, բոլոր այն վերլուծություններում, որոնք կատարվել են մասնաճյուղում «Գլխավոր համախմբի» մի մասի հարցումներից ստացած տվյալների վրա, պարտադիր հիմնավորումներ են բերված, թե ինչու է հնարավոր հետևությունները տարածել ողջ համախմբի վրա: Այսինքն, եթե մասնաճյուղի 1600 ուսանողներից (սա «Գլխավոր համախումբն» է) հարցմանը մասնակցել են 400 ուսանող, հիմնավորվել է, թե ինչու է այն վերաբերում բոլոր 1600 ուսանողին:

Ասվածն ընդհանրապես վերաբերվում է ցանկացած **սոցիոլոգիական հետազոտության**: Եթե այդ պահանջը չի իրագործվում, ցանկացած հետևության հանդեպ առաջանում է հոգեբանական անվստահություն: Այն հաղթահարելու երկու ճանապարհ կա. կամ կատարված հետազոտությանը հակադրել ավելի կատարյալ ու հիմնավոր ուսումնասիրության տվյալներ (ինչը ոչ միշտ է հնարավոր, քանի որ կախված է նյութական ու կադրային ռեսուրսների առկայության հետ), կամ էլ ժամանակի ընթացքում ապացուցել հետազոտական հետևությունների հետ իրական կյանքի համապատասխանությունը (մի բան, որը ժամանակ, համբերություն ու շահախնդիր բարի կամք է պահանջում, որոնք հաճախ չեն բավարարվում): Նման դեպքերում ասպարեզ են իջնում սուբյեկտիվ դատողությունները, անհիմն դժգոհությունները, որոնք ավելի շատ ընդհանուր գործին վնասում են, այլ ոչ թե՝ օժանդակում:

**Սոցիոլոգիական մշակույթը** պահանջում է նաև ինքնակրթություն, հասարակական կյանքի, մարդկային որակների ու հարաբերությունների վերաբերյալ որոշակի գիտելիքներ, հանրային ու աշխատանքային կյանքի իրական փաստերի ու երևույթների իմացություն ու ըմբռնում: Այլապես անհնար է ունենալ հստակ ու համարժեք սուբյեկտիվ կարծիք քննարկվող երևույթների վերաբերյալ, որոնց յուրովի գումարից էլ ձևավորվում է հասարակական կարծիքը կամ ընդհանրական գնահատականը:

Այն ունի նաև իր **բարոյական կողմն** իր բազմաթիվ նրբերանգներով: **Նախ**, երբեք չի կարելի մոռանալ, որ հասարակական կարծիքի արդյունքներն **իրավական ուժ չունեն** և նրա ցանկացած շահարկում ոչ միայն վնասում է ընդհանուր գործին, այլև էապես հեղինակագրկում է ինչպես հարցումներին, այնպես էլ իրագործողներին: Դրա համար էլ նման հարցումների արդյունքները քննարկելիս պետք է դրսևորվի չափազանց զգուշություն, նրբանկատություն, երբ խոսքը անձնային որակների կամ մասնագիտական արդյունավետ գործունեության մասին է: Միաժամանակ, այն պետք է հրապարակվի առավելապես գործի հետ առնչվող անձանց

շրջանում և արդյունքների մասին պետք է դատողություններ արվի բացառապես ծառայական էթիկայի շրջանակներում:

**Երկրորդ.** դասախոսների հակազդումն է, երբ տեղեկանում են ուսանողության գնահատականների մասին: Խոստովանենք, մեր 30-ամյա փորձի ընթացքում (նման հարցումներն անցյալ դարի 80-ականների կեսերից անց է կացվել ԵրՊԻ-ում՝ Պոլիտեխնիկական ինստիտուտում, իսկ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում՝ հիմնադրման օրերից /1992թ./ համոզվել ենք, որ դասախոսների գերակշիռ մասը դրականորեն են վերաբերվել ուսանողների գնահատումներին: Նրանք դրսևորել են ըմբռնողություն այն հարցում, թե Մեծ թվերի օրենքը յուրովի համահարթում է ծայրահեղ գնահատումները, և, եթե հարցումը անց է կացվում արհեստավարժ ու անկողմնակալ կերպով, վիճակագրորեն միջինացված մոտավոր գնահատականները հիմնականում համապատասխանում են իրականությանը: Ավելին, դասախոսների մի մասը, եթե գնահատականներում տեսել են որոշակի որակների համեմատաբար ցածր արժեքներ, փորձել են ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականորեն խորամուխ լինել հնարավոր պատճառների մեջ և հետագայում ձգտել են դրանք բարելավել: Եվ, որ, պակաս կարևոր չէ, նրանք բավականին հստակ գիտակցում են. նման հարցումները «հակաթոյն» են և հաջողությամբ չեզոքացնում են իրենց մասնագիտական ու անձնային որակների սուբյեկտիվ , երբեմնի կանխակալ, չարակամ վերաբերմունքի բացասական ազդեցությունը: Դրանք դասախոս-մանկավարժի վեհության դրսևորումներ են, որոնք էապես խթանում են հարցումների կատարելագործումը, դրանց արդյունքների ծառայեցումը ի շահ կրթօջախի:

Սակայն կա դասախոսների փոքրաքանակ մի խումբ, «դասախոսական բնավորության» մի տեսակ, որը գրեթե չի ընդունում նման հարցումների օգտակարությունը: Հիմնական փաստարկումն այն է, թե ուսանողները, հատկապես նրանց չառաջադիմող մասը, գործնականում ի վիճակի չեն համարժեքորեն գնահատել դասախոսի մանկավարժական, առավել ևս՝ մասնագիտական հատկանիշները, ինչի պատճառով նման գնահատումներն ավելի շատ ապակողմնորոշում են, քան բացահայտում ճշմարտությունը: Մի դեպքում, դա կարող է լինել դասախոսի կողմից սեփական որակների գերագնահատման պատճառով, մեկ ուրիշ պատճառ կարող է լինել անվստահությունը հարցումների տվյալների հավաստիության, կազմակերպիչների անկողմնակալության հանդեպ: Երրորդում, որքան էլ տարօրինակ է, պատճառ է հավանականային գնահատականների, հիմնավորված սուբյեկտիվ վիճակագրության գիտականությունը, հետևաբար՝ օբյեկտիվությունը, այսինքն «Մեծ թվերի օրենքը» չընդունելը: Նման դեպքերում, որպես գիտականորեն հիմնավորված պատասխան ասվում է. «ձեզ թերագնահատում են մոտավորապես ճիշտ այնքան, որքան՝ գերագնահատում են, արդյունքում ունենում ենք «ոսկե միջինը»:

Վատատեսության դեմ մեկ ուրիշ, ոչ պակաս կարևոր հակափաստարկ է աշխարհայացքային-մեթոդաբանական բնույթի այն ճշմարտությունը, թե ցանկացած ուսանող, անկախ առաջադիմությունից, որպես հասուն, որոշակիորեն սոցիալացված անձնավորություն ունի մարդկային հարաբերություններն ու անձնային որակները գնահատելու, սեփական սուբյեկտիվ կարծիքը ունենալու և՛ կարողություն, և՛ իրավունք:

Մեկ ուրիշ հանգամանք. «սոցիոլոգիական մշակույթը» ենթադրում է հատկանիշներով մտածելու որոշակի ունակություն և սովորույթ: Մի բան, որը թե՛ ուսանողության, և թե՛ աշխատակիցների մի մասի մոտ լիարժեքորեն չի դրսևորվում: Ով պատկերացնում է

սոցիալական օբյեկտի (օրինակ՝ բուհի) կառավարումը և ցանկացած կարգավիճակում փորձում է կարելիվույն օժանդակել տվյալ գործընթացին, նա ի վիճակի է հասկանալ, որ աշխատակիցների և ուսանողության սեռային կազմը, ընտանեկան ու նյութա-տնտեսական վիճակը, կադրերի հոսունության չափը, գիտական կոչումների քանակը, ուսումնա-գիտական ակտիվության քանակական բնութագրերը և այլն, հենց կառավարման գործոններ են: Նույն ըմբռնումը օբյեկտիվորեն պետք է տարածվի նաև սուբյեկտիվ վիճակագրության վրա: Օրինակ, ենթադրենք տարիների ընթացքում որևէ ամբիոնի դասախոսների հատկանիշներին տարբեր մասնագիտությունների ու տարբեր տարիների ուսանողների գնահատականը 5-բալանի սանդղակով գտնվում է 2 և 3 բալերի միջակայքում, իսկ մեկ ուրիշ ամբիոնի դասախոսներինը, նույն ժամանակահատվածի համար՝ 4,5-5 բալերի միջակայքում: Միթե՞ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման ու կառավարման տեսանկյունից նման գնահատականներն արժեք չեն ներկայացնում: Իհարկե, մեծ «շքեղություն» է այդպես մտածելը: Օրինակները կարելի է շարունակել: Եվ վերջապես, սույն համատեքստում գոյություն ունի նաև «լավատեսության» ու «իրատեսության» ինդիք: Ինչպես ժողովրդական իմաստությունն է ասում. «նավարկելիս **վատատեսը** բողոքում է եղանակից, **լավատեսը** հույս ունի, որ եղանակը կլավանա, իսկ **իրատեսը** կանգնեցնում է առագաստները»: Կարծում ենք, որ բուհի ղեկավարության դրական դիրքորոշման շնորհիվ մասնաճյուղում աստիճանաբար լավատեսությունն ու իրատեսությունը հասարակական կարծիքի հարցումների հանդեպ սկսել են բավականաչափ «անհանգստացնել» վատատեսությանը:

Ամեն դեպքում սրանք երևույթներ են, որոնք արժանի են ուշադրության և որոնց հաղթահարումն էլ ավելի է մեծացնում հավատը նման գնահատումների գործնական օգտակարության հանդեպ:

***Այժմ փորձենք ընդհանրացնել հինգ տարվա կտրվածքով անցկացված հարցումների արդյունքները:***

Աղյուսակ 1-ում բերված են մասնաճյուղի յուրաքանչյուր **ամբիոնի** կտրվածքով 2011-12-ից 2015-16 ուստարիների առաջին և երկրորդ կիսամյակներում հարցումների **միջին գնահատականները**, դրանց դինամիկան, ինչպես նաև ամբիոնի և մասնաճյուղի ընդհանուր միջին գնահատականը՝ 5 բալանի սանդղակով: Ըստ այդմ, **4,5-5,0** միջակայքում գտնվող արժեքները համարվում են «**շատ բարձր**», **3,5-4,5**-ը՝ «**բարձր**», **2,5-3,5**-ը՝ «**միջին**», իսկ  $\leq 2,5$ -ը՝ «**ցածր**»: Միալանքը՝ 0,2 բալ: Ինչպես տեսնում ենք ընդունված սանդղակով ընդհանուր մասնաճյուղային՝ **4,58**, և ամբիոնների ընդհանուր միջին գնահատականները գտնվում են «շատ բարձր» գնահատման միջակայքում: Հարաբերական իմաստով, միակ «բարձր» գնահատականի է «արժանացել» Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ընդհանրական միջին գնահատականը՝ **4,33**: Բացարձակ իմաստով սա շատ բարձր գնահատական է բարձր գնահատականների մեջ, և, ընդամենը ավելի ցածր գնահատական է՝ ավելի բարձրերի համեմատ: Գիտա-գործնական հաշվետվության մեջ նման դատողություններն ավելորդ չենք համարում, քանզի գիտականորեն հիմնավորված սուբյեկտիվ վիճակագրության գործնական նպատակներով կիրարկման ճանապարհին քիչ չեն եղել նման փաստերով շահարկումները: Համենայն դեպս նման գնահատականները թե՛ գիտատեսական, և թե՛ բարոյական տեսանկյունից չեն կարող դառնալ բացասական որակումների կամ քննադատության հիմք: Այդպիսիք են դառնում այն դեպքում, երբ շահադիտական նպատակներով, հիմնվելով մարդկանց անիրազեկության ու անտարբերության վրա (ինչը մեծապես սոցիոլոգիական ցածր

մշակույթի արդյունք է), այդ գնահատականների «հետևում» գտնվող անձանց կամ խմբերին դարձնում են «քավության նոխագ», անհիմն սուր քննադատության թիրախ: Մինչդեռ, բարոյապես ու տեսականորեն ավելի արդարացված են ի շահ ընդհանուր գործի ճշմարտությանը հասու դառնալու, ստացված արդյունքների մեջ նաև դրականը տեսնելու մղումները: Հենց նման դիտակետից էլ փորձենք խորամուխ լինել մեջբերված տվյալների մեջ:

**Մղումակ 1.**

Ամբիոնի անունը	Մ/գ 2011- 2016	2011-12		2012-13		2013-14		2014-15		2015-16	
		1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.
Գծանկարի, գունանկարի և քանդակի	4,74	4,58	4,58	4,64	4,70	4,85	4,82	4,80	4,83	4,79	4,86
Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի	4,63	4,26	4,35	4,62	4,61	4,68	4,61	4,76	4,78	4,75	4,87
Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	4,53	4,44	4,34	4,53	4,28	4,49	4,52	4,59	4,73	4,64	4,75
Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	4,33	4,23	4,09	4,47	4,02	4,41	4,34	4,52	4,32	4,38	4,48
Ընդհանուր տնտեսագիտության	4,64	4,57	4,57	4,57	4,57	4,57	4,57	4,66	4,76	4,71	4,85
Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	4,66	4,65	4,47	4,69	4,51	4,66	4,76	4,83	4,72	4,60	4,69
Հայոց լեզվի և գրականության	4,53	4,49	4,42	4,51	4,46	4,59	4,50	4,66	4,52	4,54	4,6
Հայոց պատմության և հասարակագիտության	4,54	4,56	4,56	4,52	4,54	4,53	4,46	4,56	4,41	4,63	4,67
Մանկավարժության և հոգեբանության	4,67	4,56	4,72	4,71	4,51	4,80	4,78	4,69	4,70	4,63	4,61
Օտար լեզուների	4,57	4,74	4,48	4,61	4,58	4,66	4,60	4,48	4,42	4,54	4,63
<b>Մասնաճյուղում</b>	<b>4,58</b>	4,51	4,46	4,59	4,48	4,62	4,60	4,66	4,62	4,62	4,70

Տվյալ համատեքստում ըստ հնգամյա կտրվածքով անցկացված հարցումներից ստացված արդյունքների ուսանողության հասարակական կարծիքը մասնաճյուղում դասավանդման որակի ու արդյունավետության մեջ արձանագրել է **ստաջընթաց**: Այն զգալի է մի շարք ամբիոնների գծով: Այսպես, 0,2 բալ սխալանքի պայմաններում «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի համար **ստաջընթացը կազմել է 0,61 միավոր** (2011-12 ուստարվա 1-ին կիսամյակում՝ 4,26, իսկ 2015-16 ուս տարվա 2-րդ կիսամյակում՝ 4,87), «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի համար՝ **0,31 միավոր**, «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի համար այն կազմել է **0,28 միավոր**, «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի համար՝ **0,28 միավոր**, «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների» ամբիոնի համար՝ **0,25 միավոր**: Մնացած 4 ամբիոններում գնահատականների աճը և Օտար լեզուների ամբիոնում նվազումը (4,74 բալից 2011-ին՝ 4,63՝ 2016-ին) վիճակագրական թույլատրելի սխալանքի սահմաններում է: Այդ պատճառով կարող ենք ասել, որ վերոնշյալ ամբիոններում որակական փոփոխություն հասարակական կարծիքի մեջ չի արձանագրվել: Մակայն հոգեբանորեն կարող ենք պնդել, որ, այդուհանդերձ, նկատելի է կատարելագործվելու ձգտումը:

Նույնը, թերևս ավելի շատ վերաբերում է ընդհանուր մասնաճյուղային տվյալներին: 2011-12 ուստարվա առաջին կիսամյակի համար **մասնաճյուղի միջին գնահատականը 4,51 բալ է**, իսկ

2015-16 ուս տարվա երկրորդ կիսամյակի համար՝ **4,70**: Տարբերությունը 0,19 է՝ թույլատրելի 0,2 միավորի դիմաց: Այսինքն, ընդամենը 0,01 միավոր չի բավարարում, որպեսզի վիճակագրորեն պնդենք, թե ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողության հասարակական կարծիքը դասավանդման որակի ու արդյունավետության գնահատականի մեջ արձանագրել է որակական առաջընթաց: Նման պնդումը համահունչ է նաև ուրիշ հարցումներից ստացված գնահատականներին, մասնավորաբար, այն հարցումների, որոնք նվիրված էին կրթության կազմակերպման համար պատասխանատու ստորաբաժանումների գործունեության, մասնաճյուղի ռեսուրսներից ուսանողների բավարարվածության, պրոֆեսորա-դասախոսական ու սպասարկող անձնակազմի գործունեության գնահատականներին:

Աղյուսակ 2-ում բերված են **ֆակուլտետների միջին գնահատականներն** ըստ համապատասխան ամբիոնների գնահատականների:

**Աղյուսակ 2.**

Ֆակուլտետ	Ֆակ.Մ/գ 2011- 2016	2011-12		2012-13		2013-14		2014-15		2015-16	
		1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.
Բնական գիտությունների	<b>4,48</b>	4,43	4,38	4,53	4,25	4,47	4,46	4,56	4,56	4,56	<b>4,62</b>
Տնտեսագիտության	<b>4,65</b>	4,61	4,54	4,61	4,58	4,58	4,66	4,73	4,74	4,66	4,78
Հումանիտար գիտությունների	<b>4,58</b>	4,59	4,55	4,75	4,52	4,62	4,54	4,58	4,49	4,58	4,63
Կիրառական արվեստի	<b>4,69</b>	4,44	4,46	4,63	4,66	4,78	4,72	4,78	4,8	4,76	<b>4,86</b>

Ինչպես տեսնում ենք, ըստ համապատասխան ֆակուլտետների ուսանողական համակազմի, դասավանդման որակի ու արդյունավետության ընդհանուր միջին գնահատականները **երեք ֆակուլտետներում «շատ բարձր»** է, իսկ **մեկ ֆակուլտետում՝ 4,48**: Այսինքն, Բնական գիտությունների ֆակուլտետին 0,02 բավ «չի բավարարում» «շատ բարձր» որակելու համար: Սակայն 0,01 կամ 0,02 բավերի տարբերությունն այն շեմերն են, որոնց դեպքում հոգեբանորեն նույնպես տվյալ արժեքը (0,19 կամ 0,18) կարելի է անվանել «շատ բարձր» գնահատական: Ուրեմն, որոշակի վիճակագրական վերապահումով կարող ենք ասել, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, նրա ֆակուլտետների և 10 ամբիոններից իննի միջին գնահատականները **«շատ բարձր են»**: Մեկ ամբիոնի գնահատականը գտնվում է «բարձր» և «շատ բարձր» գնահատականների սահմանագծում:

Եթե աղյուսակներին նայենք մեկ ուրիշ դիտանկյունից, կտեսնենք, որ ամբիոնների «շատ բարձր» գնահատականները, հատկապես **2015-16 ուստարվա 2-րդ կիսամյակինը**, որակապես տարբերվում են: Այսպես, օրինակ Կիրառական արվեստի ֆակուլտետի երկու ամբիոնների՝ **4,87** և **4,86**, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի՝ **4,85** միջին գնահատականները որակապես ավել բարձր են, քան Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ամբիոնների՝ **4,60; 4,61; 4,63; 4,67** կամ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի՝ **4,48** միջին գնահատականները: Այսինքն, եթե ստացված արդյունքները մի կողմից ամրագրում են առաջընթացի միտումը, մյուս կողմից բացահայտում են դասավանդման որակի և արդյունավետության ոլորտում առկա ռեսուրսները: Հետագա մանրակրկիտ վերլուծությունը պետք է ցույց տա, թե դասախոսների մասնագիտական, մանկավարժական ու անձնային որ որակներն են, որոնք ավելի շատ են անդրադարձել 5-ից ցածր գնահատականների վրա ու, այդպիսով, ընդհանուր գնահատականը նվազեցրել:

Ամբիոնի անունը	Ֆակուլտետ	Ֆակ. Մ/գ 2011-16	Ամբիոն	Ամբ. Մ/գ 2011-16	2015-16
					2-րդ կիս.
Գծանկարի, գունանկարի և քանդակի	ԿԱՖ	4,69	ԳԳՔ	4,74	4,86
Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի			ԴԿԱ	4,63	4,87
Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	ԲնԳՖ	4,48	ԸՄ/Բն	4,53	4,75
Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների			Ծ/ԻՏ	4,33	4,48
Ընդհանուր տնտեսագիտության	ՏնտՖ	4,65	ԸնդՏնտ	4,64	4,85
Տուրիզմի կառավարման և մշակութաբանության			ՏԿ/Մ2	4,66	4,69
Հայոց լեզվի և գրականության	ՀուսԳՖ	4,58	ՀԼԳ	4,53	4,6
Հայոց պատմության և հասարակագիտության			ՀՊ/Հ	4,54	4,67
Մանկավարժության և հոգեբանության			Մ/Հ	4,67	4,61
Օտար լեզուների			Օտլ	4,57	4,63

Այն, ինչ պետք է դառնա արդեն հատուկ քննարկման առարկա, որոշակի այնպիսի օբյեկտիվ ու սուբյեկտիվ ջանքերի ներդրում, որոնք կարող են ապահովել ուսանողների կողմից տվյալ որակների ավելի բարձր գնահատականը: Մի բան, ինչը դրականորեն կանդրադառնա նաև ընդհանուր ֆակուլտետային և մասնաճյուղային գնահատականների վրա:

Հնգամյա կտրվածքով ստացված **արդյունքների ղինամիկան** երբ համադրում ենք վերջին մեկ տարվա ընթացքում մեր դիտարկումների, առանձին ուսանողների ու դասախոսների հետ մի շարք խորքային հարցազրույցներից ստացած տպավորությունների, բոլոր մասնագիտությունների բարձր կուրսեցիների շրջանում Ֆոկուս-խմբերի միջոցով անցկացված քննարկումների արդյունքների հետ, վարկածի տեսքով ձևավորում է այն ճշմարտությունը, թե **հասարակական կարծիքի հարցումները**, ինքնին, որոշակի աներևույթ (անգն աչքով դժվար նկատելի) դրական ազդեցություն են գործել դասախոսների, ամբիոնի և ֆակուլտետի պատասխանատուների վրա, կապված դասավանդման որակի և արդյունավետության հանդեպ **դրսևորվող վերաբերմունքի հետ**: Չնայած առանձին, երբեմն թերի հիմնավորված կամ սուբյեկտիվ դժգոհություններին, այդուհանդերձ **հարցումների գոյության փաստը**, ուսանողների կողմից սեփական որակները գնահատելու իրողությունը յուրովի «լարում» է դասախոսների գերակշիռ հատվածին, ներարկում լրացուցիչ պատասխանատվության, ինքնաքննադատության լիցք: Այն, ինչ մղում է ինքնակատարելագործման, դասախոս-ուսանող հարաբերությունների բնույթի ու բովանդակության ճշգրտման կամ վերանայման, կրթական համակարգի ժամանակակից պահանջներին համապատասխանեցման:

**Պարբերական հարցումներն** ունեն նաև մեկ ուրիշ նկատառում: Իզուր չէ, որ հասարակական կարծիքը համեմատում են տվյալ «սոցիումի», որպես կենդանի օրգանիզմի զարկերակի աշխատանքի, կամ «լոնդոնյան եղանակի» հետ, նկատի ունենալով նրա հույժ կարևորությունը, ինչպես նաև երբեմնի կարճ ժամանակահատվածում արագ փոփոխականությունը: Մեր դեպքում **չորս տարին մեկ փոխվում է** մասնաճյուղի ուսանողական ողջ անձնակազմը, յուրաքանչյուր **ուսումնական տարում՝** նրա մի մասը, **փոխվում են** մասնագիտացումներն ու մասնագիտությունները, հետևաբար և՛ դասախոսական անձնակազմը, տվյալ

մասնագիտությունների համար բնորոշ անձնային ու մասնագիտական որակներով, կազմավորվող ուսանողական համակազմի մասնագիտական կողմնորոշման ու կենսական դիրքորոշումների յուրօրինակություններով, մասնագիտական պատրաստությանը շուկայական կյանքի, հնարավոր գործատուների կողմից թելադրվող պահանջների զարգացումներով: Այս ամենը չի կարող տարբեր չափով չանդրադառնալ դասավանդման մեթոդների, գիտելիքների ու հմտությունների հանդեպ ուսանողների նորովի պահանջների, կրթության պատասխանատուների կողմից այդ պահանջների բավարարման մակարդակի գնահատման վրա: Մի բան, որը ժամանակին ու տեղին իրագործում են հենց հասարակական կարծիքի հարցումները: Հարցումների օգնությամբ ղեկավարությունն ամենաշուտն է տեղեկացված դառնում ուսանողների տրամադրություններին, ձեռնամուխ լինում ավելի խորը վերլուծության, իրական բացթողումների լիարժեք բացահայտման: Հետևաբար, նա կանխարկում է հնարավոր դժգոհությունների խորացումը, բարելավում բարոյա-հոգեբանական մթնոլորտը, դրանով իսկ դրականորեն անդրադառնալով կրթության որակի վրա:

Յուրովի, դա դրականորեն է անդրադառնում նաև ուսանող-ֆակուլտետ հարաբերությունների վրա:

Աղյուսակ 3-ում բերված են ֆակուլտետների ղեկանի ու ղեկանի տեղակալի գործունեությանը տրված ուսանողների գնահատականը:

*Աղյուսակ 3.*

Ֆակուլտետ	Ֆակ.Մ/գ 2011- 2016	2011-12		2012-13		2013-14		2014-15		2015-16	
		1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.
Բնական գիտությունների	<b>4,86</b>	4,91	4,78	4,89	4,85	4,9	4,88	4,91	4,84	4,82	4,81
Տնտեսագիտության	<b>4,78</b>	4,89	4,94	4,7	4,6	4,78	4,7	4,85	4,83	4,73	4,89
Հումանիտար գիտությունների	<b>4,75</b>	4,73	4,58	4,66	4,7	4,79	4,78	4,84	4,79	4,85	4,71
Կիրառական արվեստի	<b>4,53</b>	4,38	3,98	4,4	4,06	4,62	4,69	4,95	4,87	4,85	4,93

Ինչպես տեսնում ենք, ֆակուլտետային ղեկավարների «հնգամյա» գործունեությունը ուսանողների կողմից արժանացել է «գերազանց» գնահատականի: Բնական գիտությունների, Տնտեսագիտության և Հումանիտար գիտությունների ֆակուլտետների ղեկաններն ու տեղակալները բոլոր հարցումների ընթացքում շատ բարձր են գնահատվել: Համեմատաբար «ցածր գերազանցը»՝ 4,53 միջին միավոր, Կիրառական արվեստի ֆակուլտետի ղեկավարությանն է, ինչը կապված է 2011-13թթ. հարցումներում, մյուսների հետ համեմատած, ոչ այնքան բարձր գնահատականների հետ: Սակայն, այստեղ ավելի կարևոր է Կիրառական արվեստի ֆակուլտետի ղեկանի գնահատականներում որակական առաջընթացը, ինչը բացակայում է մյուս ֆակուլտետներում: Այսպես, 2011-12 ուստարվա 1-ին կիսամյակում այդ գնահատականը եղել է **4,38**, 2-րդում՝ **3,98** (սա բոլորի մեջ ամենացածր գնահատականն է), իսկ 2015-16 ուստարվա 2-րդ կիսամյակում արդեն այդ գնահատականը **4,93** է: Տարբերությունները 0,55 և 0,95 միավոր. 0,2 բալ թույլատրելի սխալի դեպքում կարելի է վիճակագրորեն համարել խական առաջընթաց: Մինչդեռ մյուս ֆակուլտետներում դրությունը վիճակագրորեն չի փոխվել, քանի որ համեմատական գնահատականները սխալանքի սահմաններում նույնն են: Այդպիսով, կարող ենք փաստել, որ մասնաճյուղի ֆակուլտետների ղեկանները և տեղակալները ուսանողության հասարակական գիտակցության մեջ ունեն «բարձրագույն» կարգավիճակ: Դա նշանակում է, որ



իրենց դիտակետից ֆակուլտետի ղեկավարությունը սեփական լիազորությունների շրջանակներում պատշաճորեն են կազմակերպում ուսումնառության գործընթացը, ֆակուլտետային միջավայրում մեծապես իշխում է կարգապահության, բարյացկամության, փոխօգնության, միմյանց հանդեպ հարգանքի մթնոլորտը: Նրանք ժամանակին են արձագանքում ուսանողների դիմումներին, խնդրանքներին, հնարավորության շրջանակում ձգտում են ընդառաջել, օգնել խորհուրդներով, անձնապես մտահոգված են ուսանողների հոգսերով:

Ասվածի ճշմարտացիությունը կարող ենք հավաստել նաև սուբյեկտիվորեն: Ֆոկուս-խմբերի հետ քննարկումների ընթացքում, երբ հերթը հասնում էր ֆակուլտետի ղեկավարության հետ կապված հարցերի քննարկմանը, պետք էր տեսնել, թե գոհունակության ինչ երանելի ժպիտ էր անցնում ուսանողների դեմքերին, ինչպես էին ուրախությունից փայլում նրանցից շատերի աչքերը: Մի շարք ուսանողներ, նույնիսկ, երախտագիտություն հայտնեցին իրենց սիրելի ղեկավարների ու տեղակալների գործունեությունը գնահատելու հնարավորություն տալու առիթով:

Նույն համատեքստում է նաև **ֆակուլտետների գործավարների գործունեությունը**, որոնք թերևս ավելի շատ ու «մոտիկից» են շփվում ուսանողների հետ: Ուսումնական ու անձնական մտահոգություններով ուսանողներն առաջինը հենց «կիսվում» են գործավարների հետ, հարկ եղած դեպքում խնդրանքով դիմում նրանց օժանդակությանը: Բազմաթիվ են դեպքերը, երբ ուսումնառության տարիներին գործավարների վերաբերմունքը դրական լիցք է հաղորդում ուսանողներին, յուրովի խթանում է նրանց ուսումնական ակտիվությունը: Ավելին, նրանց միջև ձևավորված ոչ պաշտոնական ջերմ հարաբերությունները շարունակվում են նաև ավարտելուց հետո: Կարծում ենք, նորից ավելորդ չէ այս ճշմարտությունը հավաստել սուբյեկտիվորեն: 2016 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում, երբ հետազոտական նպատակներով գտնվում էինք Կիրառական արվեստի ֆակուլտետում, ականատես եղանք հուզիչ տեսարանի: Վճարովի համակարգի լավ սովորող ուսանողուհին աղիողորմ լաց էր լինում, նրան նույն կերպ «ձայնակցում էր» ֆակուլտետի գործավարն այն աստիճան, որ ականա մտածեցինք, թե ողբերգություն է տեղի ունեցել ու ցանկացանք իրազեկ դառնալ իրողությանը: Պարզվեց, որ սովյալ առաջադիմող ուսանողուհին, որը «սիրահարված է» ուսմանը (այդպիսիք, թերևս մասնաձյուղում շատ ավելի են, քան ուրիշ բուհերում), «ընդամենը» մտածում է, թե վարձավճարի մի մասը չի կարողանա վճարել ու տարի կկորցնի, ինչը անասելի ցավ է պատճառում: Ահա, ուսանողուհու հոգեվիճակն այն աստիճան էր գործավարին հարազատաբար հուզել, որ արձագանքել էր այնպես, կարծես իր երեխայի հետ էր կատարվել: Դրությունը, իհարկե շտկվեց, սակայն հաճելի նստվածքը մնաց մեր հոգում: Դրա համար էլ բնական ենք համարում այն բարձր գնահատականները, որոնք մասնաձյուղի ուսանողությունը հաճելիորեն «շռայլում է» գործավարներին: **Սղյուսակ 4-ում** բերված են ֆակուլտետների գործավարների գործունեությանը ուսանողների տված գնահատականները:

**Սղյուսակ 4.**

Ֆակուլտետ	Մ/գ 2011- 2016	2011-12		2012-13		2013-14		2014-15		2015-16	
		1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.
Բնական գիտությունների	<b>4,76</b>	4,84	4,81	4,79	<b>4,88</b>	4,79	4,72	4,83	<b>4,55</b>	4,64	4,72
Տնտեսագիտության	<b>4,86</b>	4,88	4,93	4,8	<b>4,76</b>	4,91	4,78	<b>4,99</b>	4,88	4,85	4,88
Հումանիտար գիտությունների	<b>4,69</b>	4,67	4,58	<b>4,33</b>	4,5	4,73	4,82	4,83	4,83	<b>4,88</b>	<b>4,78</b>
Կիրառական արվեստի	<b>4,52</b>	4,28	<b>3,91</b>	4,48	4,23	4,66	4,6	4,88	4,85	4,82	<b>4,93</b>

Ինչպես տեսնում ենք հինգ տարվա կտրվածքով բոլոր ֆակուլտետների գործավարների գնահատականները «գերազանց»-ի սահմաններում են: Ընդհանրական միջինով ամենաբարձրը Տնտեսագիտության ֆակուլտետի գործավարինն է՝ **4,86**, այնուհետև, Բնական գիտությունների ֆակուլտետի գործավարինը՝ **4,76**, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գործավարինը՝ **4,69** և վերջապես՝ Կիրառական արվեստի ֆակուլտետի գործավարինը՝ **4,52** միավոր: Հատկանշական է, որ գնահատականները որակապես համընկնում են ֆակուլտետի ղեկավարների գնահատականների հետ:

Ինչպես դեկանների ու նրանց տեղակալների դեպքում էր, գործավարներինը ևս, երբ համեմատվում են 2011-12 ուստարվա 1-ին կիսամյակում անցկացված հարցման գնահատականները 2015-16 ուստարվա 2-րդ կիսամյակի գնահատականների հետ, երեք ֆակուլտետներում (Տնտեսագիտության, Բնական գիտությունների, Հումանիտար գիտությունների) վիճակագրորեն չեն փոխվել, իսկ Կիրառական արվեստի ֆակուլտետում ամրագրվել է որակական առաջընթաց՝ **4,93**, 2011 թվականի 4,28 բալլի համեմատ: Ի դեպ, **4,93** բալլը բարձրագույնն է բոլոր տարիների հարցումներում գործավարներին տրված գնահատականների մեջ: Հիշատակած օրինակի ֆոնին ուսանողների նման գնահատականը բնական է ընկալվում:

Նույն զգացողությունն է եղել նաև ֆոկուս-խմբերի հետ քննարկումների ընթացքում: Տարբեր տարիներին «գերազանց» գնահատականի սահմաններում արձանագրված զիզգազան տատանումները հուշում են լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտության մասին: Օրինակ, նույն Կիրառական արվեստի ֆակուլտետի գործավարի 2011-12 ուստարվա 2-րդ կիսամյակի գնահատականը՝ **3,91**, ամենացածրն է բոլոր տարիների բոլոր ֆակուլտետների գործավարներին տրված գնահատականներում: Որպեսզի նման գնահատականի պատճառները բացահայտվեն, հարկ է խորամուխ լինել տվյալ գործավարի անձնային հատկանիշների, բնավորության գծերի մեջ, ծանոթանալ այդ ժամանակահատվածի ուսանողության և գործավարի միջև ձևավորված հարաբերությունների առանձնահատկությունների հետ: Այն ամենի հետ, ինչը թույլ կտա որոշակի դատողություններ անել տվյալ գործավարից ուսանողների համեմատական «դժգոհության» պատճառների վերաբերյալ, առավել ևս, վերջին երկու ուսումնական տարում տրված բարձրագույն գնահատականների մասին: Մակայն ասվածն էլ բավարար է այն հետևության համար, թե **ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենությունը, տարիների ընթացքում կարողացել է կազմավորել ֆակուլտետային այնպիսի ղեկավարություն ու գործավարներ, որոնք իրենց ֆակուլտետներում ստեղծել են ուսումնասեր մարդկային ջերմ հարաբերություններ, որը ոչ միայն առաջադիմող, այլ ուսանողության գերակշիռ մասի «սրտովն» է, մի իրողություն, որը նրանք արտահայտել են իրենց գնահատականներում:**

***Ընդհանրացնելով վերոշարադրյալը կարող ենք ամրագրել հետևյալը.***

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, վերջին հնգամյակում «Հասարակական կարծիքի սոցիոլոգիան» արմատավորվում է որպես կրթօջախի կառավարման գործոն, առավել ևս այն արդիական է «Կրթական ծրագրի պատասխանատու»-ի ինստիտուտի կայացման համատեքստում;

2. Մասնաճյուղի ուսանողության կողմից դասախոսական անձնակազմի մասնագիտական և անձնային որակների, ինչպես նաև ֆակուլտետային ղեկավարության գործունեության պարբերական գնահատումները դասախոս-ուսանող, ամբիոն-ուսանող և ֆակուլտետ-ուսանող հարաբերություններում արդյունավետ հետադարձ կապի ապահովման

գործուն միջոց են, միաժամանակ դրանք կրթօջախի, նրա առանձին ստորաբաժանումների ու աշխատակիցների վերաբերյալ սուբյեկտիվ որակումների դեմ կատարում են «հակաթույնի» դեր;

3. 2011-2016թթ. ընթացքում կատարված 10 հարցումներից ստացված արդյունքների վերլուծությունը փաստում է, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողության հասարակական գիտակցության մեջ իշխում է այն համոզմունքը, թե իրենց ուսումնառությունը սպասարկվում է բարձրորակ դասախոսական անձնակազմի և ամբիոնային ու ֆակուլտետային ստորաբաժանումների կողմից: Սուբյեկտիվ վիճակագրական փաստ, որը նաև մասնաճյուղի արդյունավետ գործունեության գնահատականն է; Առանձին դասախոսների կամ ստորաբաժանումների համեմատաբար ցածր արդյունքները պահանջում են պատճառների ավելի խորը վերլուծություն:

***Ելնելով վերոշարադրյալից առաջարկվում է.***

1. Հարցումների ընդհանրական արդյունքները տեղադրել մասնաճյուղի կայք-էջում;
2. Գործուն քայլեր ձեռնարկել տվյալների հավաստիության և հանրության շրջանում դրանց հանդեպ վստահության մեծացման ուղղությամբ: Այդ նպատակով յուրաքանչյուր նմանօրինակ հարցումից առաջ պարտադիր համարել ՄԿՈԱ բաժնի մասնագետների և Ուսումնամեթոդական վարչության աշխատակիցների օգնությամբ նախապատրաստական աշխատանքների կատարումը: Մասնավորաբար, ուսանողության (հատկապես նորացված անձնակազմի) հետ պարբերական հանդիպումները և հարցումների նրբությունների վերաբերյալ իրազեկումը, այն ամենը, ինչը կարող է օժանդակել անկեղծ ու չթելադրվող պատասխաններին;
3. Հանրությանը իրազեկելու և տվյալների հանդեպ վստահությունը մեծացնելու նպատակով մասնաճյուղի կայք-էջում պարբերաբար անդրադառնալ «սոցիոլոգիական» և «սոցիալ-հոգեբանական» մշակույթի յուրահատկություններին, տվյալ ոլորտում առկա միջազգային փորձին;
4. Բացառելով տվյալների արտահոսքը և բարոյական նկատառումներով պահպանելով որոշակի «կոնֆիդենցիալությունը», առանձին դասախոսների, ստորաբաժանումների և պատասխանատուների հետ իրագործել գործնական քննարկումներ: Այստեղ չափազանց կարևոր է որակումներում զերծ մնալ այնպիսի ձևակերպումներից, որոնք որևէ կերպ կարող են վիրավորել դիմացինի անձը;
5. Ընդունելի ժամկետներում պարբերաբար անդրադառնալ գնահատվողների կողմից դիտողությունները հաշվի առնելու խնդրին;
6. ՄԿՈԱ բաժնի կողմից անցկացված հարցումների հիման վրա 2017 թվականի ընթացքում պատրաստել ժողովածու՝ «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի հայելու մեջ» վերնագրով:

***Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին***